HAL open science

[redacted]

Koryun Atoyan

To cite this version:

Koryun Atoyan. [redacted]. Modern issues of improving business environment and enlarging international economic cooperation in the Republic of Armenia, Armenian State University of Economics, Nov 2016, Yerevan, Armenia. pp.3-9. ⟨hal-03284520⟩

HAL Id: hal-03284520

https://hal.science/hal-03284520v1

Submitted on 12 Jul 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

Autorisation HAL

HAL Authorization

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՊՏՀ ռեկտոր

ՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՄԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, շինարարություն, անշարժ գույք, ներքին պահանջարկ, ՀՆԱ, հետճգնաժամային ժամանակահատված*

Գաղտնիք չէ, որ մեր տնտեսության առավել խոցելի կողմերից մեկն իրական հատվածի ցածր մրցունակությունն է: Վերջինիս հաղթահարման ուղղությամբ տնտեսության արդյունավետ խթանման ծրագրային լուծումներ դեռևս չի հաջողվել մշակել:

Կատարված հետազոտությունը և տնտեսությունում լոկոմոտիվի դեր ունեցող ճյուղերի որոնումները դրդում են վերագնահատելու լայնածավալ շինարարության և մասնավորապես՝ մասշտաբային բնակարանաշինության խթանմամբ տնտեսական աճի ապահովման նպատակահարմարությունը:

Լայնածավալ շինարարության պայմաններում հնարավոր է գործարկել երաշխավորված ներքին պահանջարկի վրա հիմնված աճի մոդել, որն այդքան մեծ չափով կախված չի լինի արտաքին աշխարհի ցնցումներից:

Հարգելի՛ գործընկերներ,

գաղտնիք չէ, որ մեր տնտեսության առավել խոցելի կողմերից մեկն իրական հատվածի ցածր մրցունակությունն է: Վերջինիս հաղթահարման ուղղությամբ տնտեսության արդյունավետ խթանման ծրագրային լուծումներ դեռևս չի հաջողվել մշակել: Կարծում ենք՝ սրա հիմնական պատճառը տնտեսական զարգացման նախկին սցենարի փորձի պահպանման մեջ է: Հայտնի փաստ է, որ 2004-2008 թվականներին մեր տնտեսությունը զարգացել է հիմնականում արտաքին տրանսֆերտների և օտարերկրյա ներդրումների հաշվին ապահովվող ներքին պահանջարկի աճի սցենարով, ինչը հնարավորություն է ընձեռել զարգացնելու ծառայությունների, առևտրի, տրանսպորտի և շինարարության ոլորտները: Տնտեսության մեջ այս ոլորտների բաժնեմասի հետևողական աճը պայմանավորված էր ոչ միայն ու ոչ այնքան դրա թողարկման ծավալների աճով, այլև այն հանգամանքով, որ, որոշակի փուլից սկսած, ներմուծումը ներքին արտադրության համեմատ դարձավ առավել գրավիչ՝ զսպելով իրական հատվածի թողարկման ծավալների ավելաց-

ման հնարավորություններն ու շահամիտվածությունը: Բավական է նշել, որ 2004-2008 թվականներին ներմուծման ծավալների աճը ՀՆԱ նույն ցուցանիշը գերազանցել է մոտ 1.6, արդյունաբերությանը՝ 2.9 և գյուղատնտեսությանը՝ շուրջ 2 անգամ:

Անցյալի հետահայաց վերլուծությունը փաստում է, որ թեև տնտեսական աճի խթանման գործարկված մոդելը նպաստել է երկնիշ տնտեսական աճի ապահովմանը, սակայն, արդյունքում, ձևավորվել է մի իրավիճակ, երբ ներքին պահանջարկի աճը հիմնականում ակտիվացրել է ներկրվող ապրանքների վերջնական սպառումը և էապես թուլացրել տնտեսության իրական հատվածի աճի և զարգացման հնարավորությունները, ինչի բացասական հետևանքները զգացվում են մինչ օրս:

Ճիշտ է, ճգնաժամին հաջորդող ժամանակահատվածում արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականության մշակումը, տնտեսական զարգացման նոր գերակայությունների սահմանումը միտված էին այս խնդիրների լուծմանը, սակայն տնտեսական գերակայություն հայտարարված ճյուղերի աճի և տնտեսական ակտիվության ապահովման գործում դրանց մասնակցության համակողմանի վերլուծությունը փաստում է, որ վերջինը չի ապահովել տվյալ ծրագրերով ակնկալված արդյունքները: Կարող ենք արձանագրել, որ, չնայած գործադրված ջանքերին, դեռևս չի հաջողվել գտնել տնտեսությունում բեկում մտցնելու և արագ, ինչու չէ, նաև կայուն տնտեսական աճ ապահովելու բանալին:

Հարկ է նշել, որ տնտեսական աճի ապահովման նոր մոտեցումներ մշակելու նպատակով ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում ձևավորվել է համապատասխան խումբ, որը փորձում է օբյեկտիվ ու համակողմանի կերպով գնահատել Հայաստանում ներքին պահանջարկի և արտահանման խթանման մոդելներով զարգացման հնարավորությունները, վեր հանել երկու մոդելների համեմատական առավելությունները, վերլուծել տնտեսական զարգացման որդեգրված գերակայությունների՝ արդեն իսկ ապահոված արդյունքներն ու հետագա աճի հեռանկարները, ինչպես նաև նախանշել աճի ապահովման նոր մոտեցումներ:

Կատարված հետազոտությունը փաստում է, որ թեև արդյունաբերական գերակա ճյուղերի թողարկման ֆիզիկական ծավալները հետճգնաժամային ժամանակահատվածում ավելի արագորեն են աճել, քան ողջ տնտեսությանը, ապահովելով 2009-2015 թվականների տնտեսական ակտիվության ցուցանիշի 7.2% աճի մոտ 3%-ը, սակայն դրանց համեմատաբար փոքր ծավալը, ինչպես նաև շինարարության ոլորտում շարունակվող անկումը նվազեցրել են վերջինների աճի էֆեկտը ՀՆԱ-ի վրա: Սա այն դեպքում, երբ կատարված հաշվարկներից ակնհայտ է դառնում, որ հետճգնաժամային ժամանակահատվածում ընթացիկ գներով համախառն աճի գերակշիռ մասը՝ մոտ 3/4-ը, տեղի է ունեցել բացառապես գների բարձրացման հաշվին:

Պետք է նշել, որ մինչճգնաժամային հատվածում նույնպես այս ճյուղերն էական ներդրում չեն ունեցել տնտեսական ակտիվության ցուցանիշի աճում: Մասնավորապես՝ եթե 2003-2008 թվականներին տնտեսության թողարկումն աճել է 86.3%-ով, ապա շինարարության թողարկումը՝ մոտ 4 անգամ, իսկ գերակա ճյուղերինը միասին վերցրած՝ ընդամենը 20%-ով: Ըստ էության, մինչճգնաժամային ժամանակաշրջանի 86.3%-անոց տնտե-

սական ակտիվության 39.5 տոկոսային կետն ապահովել է հենց շինարարության ճյուղը, իսկ գերակա հայտարարված արդյունաբերական 7 ճյուղերը միասին վերցրած՝ ընդամենը 1.4 տոկոսային կետը:

Ցանկանում ենք շեշտել, որ այս ճյուղերի զարգացման ընտրված մոդելի անհրաժեշտությունը և նույնիսկ դրանց գերակա լինելու հանգամանքը մենք չենք վիճարկում: Դրանք էական նշանակություն ունեն Հայաստանում ՀՆԱ աճի ապահովման և արտահանման խթանման համատեքստում: Սակայն, կարծում ենք, որ հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող տնտեսական, քաղաքական, ռազմական բնույթի գործընթացները, ինչպես նաև տնտեսական աճ ապահովելու դժվարություններն աշխարհում՝ ընդհանրապես ու Հայաստանում՝ մասնավորապես, աճի կայուն ցուցանիշների ապահովման համար առավել նպատակահարմար է երաշխավորված ներքին պահանջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելի գործարկումը: Ի դեպ, հայտարարված տնտեսական զարգացման գերակայություններից սննդամթերքի արդյունաբերությունն աճում է հիմնականում ներքին պահանջարկի մոդելով: Միաժամանակ, այս ճյուղի զարգացման հնարավորությունը մեծապես կախված է ավելի քան 760000 տնային տնտեսությունների նախապատվություններից, որոնք, ցավոք, ներկայումս տեղական արտադրանքի օգտին չեն: Իրավիճակի փոփոխությունը պահանջում է ինչպես ճյուղի ընկերությունների, այնպես էլ դրանց թողարկած արտադրանքի մրցունակության բարձրացում, մարքեթինգի և գովազդի ծախսերի զգալի մեծացում: Արտահանման մոդելին անցման պարագայում նշվածներին գումարվում են նաև տրանսպորտային, լոգիստիկ և առևտրային ենթակառուցվածքների ձևավորման ծախսերը:

Հատկանշական է, որ ներքին երաշխավորված պահանջարկի հաշվին տնտեսական աճի ապահովման անհրաժեշտությունն ունի նաև այլ օբյեկտիվ հիմքեր: Մասնավորապես՝ Հայաստանի արտահանման համեմատաբար բարձր կենտրոնացվածության, իրական հատվածի ընկերությունների համեմատաբար ցածր մրցունակության, «Պատրաստված է Հայաստանում» բրենդի գլոբալ ճանաչման, ինչպես նաև հեռահաղորդակցության ու լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացման ցածր աստիճանի պատճառով արտահանման մոդելի հաշվին արագ աճի ապահովման հնարավորություններն առավել սահմանափակ են: Մյուս կողմից՝ ուշագրավ է, որ անգամ արտահանման վրա ավանդաբար կենտրոնացած երկրները նույնպես ներկայումս մշակում են ներքին պահանջարկի հաշվին ընդլայնման ռազմավարություններ:

Ընդհանուր առմամբ, կատարված հետազոտությունը և տնտեսությունում լոկոմոտիվի դեր ունեցող ճյուղերի որոնումները դրդում են մեզ կրկին վերագնահատել լայնածավալ շինարարության և մասնավորապես՝ մասշտաբային բնակարանաշինության խթանմամբ տնտեսական աճի ապահովման նպատակահարմարությունը, չնայած նրան, որ վերջինն աճի ապահովման ամենաքննադատված սցենարներից մեկն է: Այնուամենայնիվ, թույլ տվեք փաստել, որ ոչ այս մոտացման քննադատության ու ոչ էլ դրա պաշտպանության առանցքում մինչ այժմ չեն դրվել այն բացթողումները, որոնք առկա են եղել նախորդող շինարարական բումի ժամանակահատվածում: Բացի այդ, երբևէ չի վերլուծվել, թե ինչ

պատկեր կարձանագրվեր, եթե շինարարության խթանմամբ, աճի ապահովմանը զուգահեռ, 2003-2008 թվականներին գործարկվեր երաշխավորված ներքին պահանջարկի ձևավորման մոդել, որի նպատակը լիներ շինարարության ճյուղը տնտեսության իրական հատվածի քարշակի վերածելը:

Մեր առաջարկած մոտեցումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ իրողություններով և հիմնավորումներով.

1. Փաստացի շինարարությունն այն եզակի ճյուղն է, որն ապահովում է բազմարկչային և սիներգիկ ամենամեծ էֆեկտները տնտեսության մեջ և համակարգաստեղծ ոլորտ է: Այն ներառում և «աշխատեցնում» է մի քանի տասնյակ գործունեության ոլորտներ, առաջացնում է 1100-ից ավելի արտադրատեսակների պահանջ, ինչի մեծ մասը կարելի է ապահովել ներքին արտադրության հաշվին, որը չի արվել 2003-2008 թթ. շինարարական բումի տարիներին: Գաղտնիք չէ, որ 2002-2008 թթ. շինարարության ծավալների աճ Հայաստանում հիմնականում տեղի է ունեցել օգտագործվող շինանյութերի և սարքավորումների ներմուծման հաշվին: Մասնավորապես՝ եթե այդ ընթացքում ՀՀ ներմուծման ծավալներն աճել են շուրջ 4,5 անգամ, ապա միայն շինանյութերի ներմուծման ծավալները՝ 8,5 անգամ: Պետք է նշել, որ անգամ նման պայմաններում շինարարությանը փոխկապված արդյունաբերական ճյուղերը տնտեսության իրական հատվածից ավելի արագորեն են աճել: Այսպես՝ 2002-2008 թվականներին մշակող արդյունաբերությանը, շինարարությանը փոխկապված հատվածներում թողարկման ծավալները մոտ 3 անգամ գերազանցել են նույն ժամանակահատվածում մշակող արդյունաբերության թողարկման ծավալների աճը: Ավելին, այդ տարիներին շինարարությունը հիմնված է եղել առանձին կառուցապատողների համար գերշահույթներ ապահովելու սկզբունքի վրա, այնինչ մեր առաջարկած ծրագրում բնակարանաշինությունը հիմնականում շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Դրա առանցքային նպատակն է շինարարությունը լոկոմոտիվի վերածելով Հայաստանում զարգացնել շինանյութերի արդյունաբերությունը, իսկ հետագայում՝ նաև խթանել արտահանումը:

   Պետք է արձանագրել, որ Կառավարությունը մեկ այլ ճյուղի որևէ ապրանքատեսակի համար չի կարող սպառման նման հնարավորություն ստեղծել:

2. Լայնածավալ շինարարության պայմաններում հնարավոր է գործարկել երաշխավորված ներքին պահանջարկի վրա հիմնված աճի մոդել, որն այդքան մեծ չափով կախված չի լինի արտաքին աշխարհի ցնցումներից: Փաստացի շինանյութերի ընտրությունը կախված է ավելի քիչ թվով մասնակիցների (կառուցապատողների) նախապատվություններից, ինչը, համապատասխան քայլերի պարագայում, հնարավոր է ուղղորդել դեպի ներքին արտադրություն: Այս մոտեցումը, մեր կարծիքով, հնարավոր չէ կիրառել որևէ այլ ոլորտում:

   Երաշխավորված ներքին պահանջարկի ներքո մենք պատկերացնում ենք այն, որ շինարարության ոլորտը, համապատասխան մեխանիզմների առկայության պա-

ռագայում, կարող է սպասարկող ճյուղերի համար վերածվել երաշխավորված ներքին շուկայի: Իբրև մեխանիզմ՝ դիտարկում ենք այն, որ շինարարության համար անհրաժեշտ նյութերը կառուցապատողի կողմից ձեռք բերվեն ներքին արտադրողից: Տվյալ դեպքում ապրելու համար պատրաստ բնակարանի խելամիտ գնով առաջարկը կենթադրի, որ անգամ հարդարման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը կարելի է ուղղորդել դեպի ներքին շուկայում արտադրողներ:

3. Շինարարության աճի ժամանակահատվածում, ներմուծման փոխարինման հաշվին, հնարավոր է կազմակերպել բազմաթիվ ապրանքատեսակների տեղական արտադրություն՝ պետության կողմից տեղական արտադրանքի երաշխավորված իրացմամբ: Իսկ այդ ընթացքում կայացած և դրվածքային որոշակի հզորություններ ձևավորած տեղական ընկերությունները, կապված որոշակի իրողությունների հետ, առավել մրցունակ են և անգամ անկումային ժամանակահատվածում կարողանում են աճել: Սրա մասին է վկայում շինարարական պլաստմասսայե խողովակների, կառուցամասերի, ներկանյութերի, շինարարական մետաղե կառուցամասերի և այլ արտադրատեսակների ծավալների աճը հետճգնաժամային ժամանակահատվածում: Փաստենք, որ սրանք արտադրություններ են, որոնք կազմակերպվել են հենց 2003-2008 թթ. շինարարական բումի տարիներին:
4. Լայնածավալ բնակարանաշինության կազմակերպման համար առկա են օբյեկտիվ հիմքեր: Մասնավորապես՝ գնահատված պահանջարկի մեծությունը թույլ է տալիս պնդել, որ միայն Երևանում վճարունակ և բնակարանի կամ բնակմակերեսի ընդլայնման կարիք ունեցող, ինչպես նաև վարձակալական հիմունքներով բնակվող տնային տնտեսությունների պահանջարկի բավարարումը ենթադրում է առնվազն 18500 բնակելի միավորի գործարկում, ինչը, բազմապատկելով բնակելի միավորի միջին մակերեսով (80 ք/մ), մոտ 1.5 մլն ք/մ է: Տվյալ դեպքում խոսքն այնպիսի տնային տնտեսությունների մասին է, որոնք կարող են, ամսական 80-120.000 դրամի սահմաններում կանոնավոր վճարումներ կատարելով, էկոնոմ դասի բնակարան ձեռք բերել: Ի դեպ, անգամ ԱՎԾ չափումները ցույց են տալիս, որ Երևանում բնակվող տնային տնտեսությունների մի զգալի մասը (մոտ 6.5%-ը) ապրում է վարձակալած բնակարաններում՝ ամսական կատարելով 60-80.000 դրամի վճարում:
5. Առաջարկվող ծրագիրը չի պահանջում խոշորածավալ ներդրումներ: Մասնավորապես՝ 1.5 մլն ք/մ բնակմակերեսի շահագործումը ենթադրում է 330 մլրդ դրամի կամ շուրջ 660.0 մլն դոլարի ներդրում: Վերջինն առաջարկվում է իրականացնել 5 տարվա ընթացքում, որի դեպքում տարեկան պահանջվող ներդրումները կկազմեն 66 մլրդ դրամ կամ, մոտավորապես, 137.0 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, որոշակի փուլից սկսած, ներդրումներ հնարավոր է կազմակերպել նաև նախորդող տարիների շահառուների իրականացրած վճարումների հաշվին:
6. Ծրագիրն աչքի է ընկնում հատույցի բարձր էֆեկտով: Այսպես՝ միայն Երևան քաղաքում լայնածավալ բնակարանաշինության ծրագրի գործարկման արդյունքում

տարեկան հնարավոր է ապահովել առնվազն 1.5% լրացուցիչ տնտեսական աճ: Եվ սա՝ առանց հաշվի առնելու շինարարության մեջ ներմուծման փոխարինման էֆեկտը: Այլ կերպ ասած, անգամ նախկին մոդելով աշխատելու պարագայում նշված ծավալով կառուցապատումը կապահովի տարեկան շուրջ 1.5% լրացուցիչ տնտեսական աճ:

Առաջարկվող ծրագրի իրականացման համար հարկավոր է հստակ ապահովել որոշակի նախապայմաններ.

1. Ծրագիրը ենթադրում է էկոնոմ դասի, ամբողջությամբ վերանորոգված, այսպես ասած, ապրելու համար պատրաստ, ստանդարտ բնակարանների կառուցում և վաճառք:
2. Առաջարկվող բնակարանաշինությունն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես շինարարի խելամիտ շահույթի միջակայքում, ինչը ենթադրում է, որ նորակառույցում առաջարկվող բնակարանի գինը նկատելիորեն ցածր պետք է լինի տվյալ համայնքում վաճառվող՝ ամբողջովին վերանորոգված և բնակության համար պատրաստ անշարժ գույքի միջին գներից: Ի դեպ, սրա նախադեպն արդեն իսկ առկա է. մասնավորապես՝ 2008-2014 թվականներին տարբեր ծրագրերով կառուցված նորակառույցներում ապրելու համար պատրաստ բնակարանների գները զգալիորեն ցածր են եղել ինչպես տվյալ համայնքներում, այնպես էլ Երևան քաղաքում վաճառվող բնակարանների միջին գներից:
3. Քանի որ բնակարանաշինությունը չենք դիտարկում իբրև բիզնես գործունեություն, ապա, բնակարանների իրացման առումով ևս, առաջարկում ենք ներդնել պարզ, առանց միջնորդների վաճառքի մեխանիզմներ: Տվյալ դեպքում առավել կարևոր է հենց ֆինանսական միջնորդության ինստիտուտի բացառումը: Մենք առաջարկում ենք վաճառքի մեխանիզմ, որի դեպքում ձևավորված հիմնադրամը բնակչին, առանց զգալի կանխավճարի, կտրամադրի բնակարան, իսկ վերջինս կիրականացնի վճարումներ՝ ամսական 70-120.000 դրամի սահմաններում՝ ամբողջական արժեքի մարումից հետո դառնալով սեփականատեր: Քանի որ բնակարանների գումարների մարումը ենթադրում է երկարաժամկետ գործընթաց, ապա ծրագրի իրականացումից որոշ ժամանակ անց կապահովվի ներդրված միջոցների հետգնումը, դա էլ՝ ինքնածախսածածկումը:
4. Ծրագիրը կհաջողի, եթե նախապես մշակվեն կառուցապատողին ուղղորդելու գործուն մեխանիզմներ՝ ներքին արտադրողից նյութերի, կառուցամասերի և շինանյութի ձեռքբերման առումով: Սա ենթադրում է ինչպես ինստիտուցիոնալ միջավայրի, այնպես էլ ներուժի ձևավորում: Այսինքն՝ մի կողմից պետք է առկա լինեն նշված պահանջարկը բավարարելու ներուժ ունեցող ընկերություններ, մյուս կողմից՝ դրանցից գնում իրականացնելը խթանող գործուն շարժառիթներ և երրորդ կողմից՝ արտադրողների կողմից գների անհիմն բարձրացումը զսպող մեխանիզմներ:

Մեկ հավելում ևս. բնակարանաշինությունը դիտարկելով որպես տնտեսության իրական հատվածի աշխուժացման միջոց՝ հնարավոր է լուծել նաև ազգաբնակչությանը մատչելի բնակարաններով և աշխատատեղերով ապահովելու սոցիալական խնդիրը:

Շնորհակալություն ուշադրության համար:

КОРЮН АТОЯН

МАСШТАБНОЕ ЖИЛИЩНОЕ СТРОИТЕЛЬСТВО КАК НАПРАВЛЕНИЕ ПО ОБЕСПЕЧЕНИЮ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА ЧЕРЕЗ СТИМУЛИРОВАНИЕ ВНУТРЕННЕГО ПРОИЗВОДСТВА

Ключевые слова: *экономический рост, строительство, недвижимое имущество, внутренний спрос, ВВП, посткризисный период*

Не секрет, что одним из слабых сторон нашей экономики является низкая конкурентоспособность реального сектора, для поднятия которого, как и для эффективной стимуляции экономики, решения пока еще не удалось разработать.

Осуществленный анализ и поиски ветвей, имеющих роль локомотива в экономике заставляют нас переоценить целесообразность обеспечения экономического роста путем стимуляции масштабного жилищного строительства.

В условиях широкомасштабного строительства возможно применение модели роста, основанной на гарантированном внутреннем спросе, которая не будет зависеть в значительной степени от шоков внешнего мира.

KORYUN ATOYAN

МАСШТАБНОЕ ЖИЛИЩНОЕ СТРОИТЕЛЬСТВО КАК НАПРАВЛЕНИЕ ПО ОБЕСПЕЧЕНИЮ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА ЧЕРЕЗ СТИМУЛИРОВАНИЕ ВНУТРЕННЕГО ПРОИЗВОДСТВА

Key Words: *economic growth, constructing, real estate, domestic demand, GDP, post-crisis period*

It's no secret that one of the weak points of our economy is the low competitiveness of the real sector, for which, as yet for effective stimulation of the economy, solutions have not yet been developed.

The carried out analysis and the search for branches that have the role of locomotive in the economy force us to overestimate the feasibility of ensuring economic growth by stimulating large-scale housing construction.

In the context of large-scale construction, it is possible to use a growth model based on guaranteed domestic demand, which will not depend to a large extent on the shocks of the outside world.